ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

ՀԱՎԵԼՎԱԾ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	*186, ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ, ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ*
Ընդունող մարմինը՝	*Տնօրինություն*
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	*05.03.2026թ. թիվ 08-Լ որոշում*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	*06.03.2026թ.*
Խմբագրության հերթական համարը՝	*18.0*
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	*Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ*
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	*Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ*
Հրապարակայնությունը՝	☒ *հրապարակվող* ☐ *սահմանափակ* ☐ *գաղտնի*

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ստորև ներկայացված պայմանները (այսուհետ՝ «Հիմնական պայմաններ») կարգավորում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») և բանկային հաշվի բացման դիմումը կամ Բանկի կողմից որոշակի ծառայության մատուցման համար սահմանված տիպային ձևի փաստաթուղթը ստորագրող անձի (անձանց) (այսուհետ՝ «Հաճախորդ») միջև իրականացվող բանկային գործառնությունները և հանդիսանում են Բանկի ու Հաճախորդի (այսուհետ նաև՝ «կողմեր») փոխհարաբերությունները կարգավորող ժամկետային պայմանագիր:

1.2. Սույն ակտը հանդիսանում է բանկային հաշվի պայմանագիր:

1.2.1. Բանկային հաշվի պայմանագիրը համարվում է կնքված, եթե Հաճախորդի կողմից Բանկի ներքին ակտերով սահմանված ամբողջական փաստաթղթերի հետ միասին ստորագրված բանկային հաշվի բացման դիմումը և/կամ Բանկի կողմից որոշակի ծառայության մատուցման համար սահմանված տիպային ձևի փաստաթուղթը ներկայացվել է Բանկին, իսկ Բանկի կողմից՝ դրական որոշում է կայացվել Հաճախորդի համար հաշիվ բացել կամ մատուցել որոշակի սահմանափակ ծառայություններ:

1.2.2. Բանկային հաշվի պայմանագիրն ուժ մեջ է մտնում՝ Բանկի կողմից հաշիվ բացելու վերաբերյալ դրական որոշում կայացնելու պահից և գործում է 1 (մեկ) օրացուցային տարի ժամկետով: 1 (մեկ) օրացուցային տարին լրանալուց հետո, եթե կողմերից որևէ մեկը մյուս կողմին չի տեղեկացնում բանկային հաշվի պայմանագիրը ժամկետը լրանալու հիմքով դադարած համարելու վերաբերյալ, ապա բանկային հաշվի պայմանագիրը համարվում է յուրաքանչյուր անգամ երկարաձգված ևս 1 (մեկ) օրացուցային տարի ժամկետով:

1.2.3. Եթե Հաճախորդը և Բանկը միմյանց հանդեպ փոխադարձ պարտավորություններ ունեն, ապա բանկային հաշվի պայմանագիրը լուծելու կամ բանկային հաշվի սպասարկումը կասեցնելու իրավունք ունի միայն Բանկը:

1.2.4. Բանկային հաշվի բացման դիմումի և/կամ Բանկի կողմից որոշակի ծառայության մատուցման համար սահմանված տիպային ձևի փաստաթղթի ստորագրմամբ Հաճախորդը հաստատում է Բանկի ու Հաճախորդի միջև բանկային հաշվի պայմանագիրը կնքված լինելու փաստը, ինչպես նաև սույն Հիմնական պայմանների և Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին կանոնների, սակագների և պայմանների ընդունումը:

1.3. Բանկն իրավունք ունի Հաճախորդին մատուցել միայն այն ծառայություն(ներ)ը, որի(որոնց) ստացման նպատակով Հաճախորդն ի սկզբանե դիմել է Բանկին՝ հաշվի բացելու համար: Հաճախորդին համապատասխան ծառայություն(ներ)ը մատուցելու կամ չմատուցելու որոշումը Բանկը կայացնում է միակողմանի:

1.4. Հիմնական պայմանների հայերեն տարբերակը նախապատվություն ունի այլ լեզուներով հրապարակված տարբերակների նկատմամբ:

1.5. Բանկը մատուցված ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձում է վճար (միջնորդավճար)՝ համաձայն Բանկի կողմից սահմանված սակագների և պայմանների (այսուհետ՝ «Սակագներ»): Սակագներով նախատեսված վճարները Բանկի կողմից գանձվում են Հաճախորդի դրամային հաշվի (հաշիվների) մնացորդ(ներ)ից: Սակայն, տվյալ հաշվին (հաշիվներին) համապատասխան միջոցների բացակայության դեպքում Բանկը գանձվելիք գումարը գանձում է Հաճախորդի արտարժութային հաշվից (հաշիվներից)՝ գանձման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի գնման փոխարժեքով և/կամ դեպո և/կամ այլ տեսակի հաշվից:

1.6. Հիմնական պայմանները և Սակագները, ինչպես նաև Հաշվի բացման դիմումի կամ Բանկի կողմից որոշակի ծառայության մատուցման համար սահմանված փաստաթղթերի տիպային ձևերը հետագայում կարող են փոփոխվել Բանկի նախաձեռնությամբ և Բանկի կողմից՝ այդ մասին 30 օր առաջ պատշաճորեն ծանուցելով հաճախորդներին:

1.7. Հաճախորդը համարվում է պատշաճորեն ծանուցված, եթե ծանուցումը տեղադրվել է Բանկի ինտերնետային կայքում (տնային՝ www.armswissbank.am էջում) և/կամ փակցված է Բանկի տարածքում՝ Հաճախորդների սպասարկման համար նախատեսված համապատասխան տեսանելի վայրում: Հիմնական պայմանների և/կամ Սակագների փոփոխություններից հետո Հաճախորդի կողմից Բանկի ծառայություններից օգտվել շարունակելը (ներառյալ՝ հաշիվները չփակելը՝ առանց դրանցով գործառնություններ կատարելու) նշանակում է, որ փոփոխություններն ընդունվել են Հաճախորդի կողմից:

1.8. Բանկը Հաճախորդին սպասարկում է Բանկի գործառնական օրվա ընթացքում, որը Բանկը սահմանում է ինքնուրույն: Գործառնական օր է համարվում Հաճախորդի սպասարկման համար սահմանված ժամերը, որը Բանկը հրապարկում է ինտերնետային կայքում (տնային՝ www.armswissbank.am էջում) և/կամ փակցված է Բանկի տարածքում՝ Հաճախորդների համար տեսանելի վայրում:

1.9. Սույնով Հաճախորդը Բանկին տալիս է իր համաձայնությունը՝ այլ անձանցից ընդունել Բանկի առջև Հաճախորդի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանն ուղղված գումարները և Բանկին ազատում է այդ գործողություններից բխող ցանկացած պահանջներից և պատասխանատվությունից:

1.10. Բանկին ուղղված բոլոր հանձնարարականները պետք է ձևակերպված լինեն հստակ, կազմված լինեն ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ակտերի պահանջներին համապատասխան: Նախկինում տրված հանձնարարականների փոփոխությունները, վավերացումները և կրկնողությունները պետք է որոշակիորեն նշվեն որպես այդպիսիք: Հանձնարարականների կատարման հետևանքների ռիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը, և դրանք հատուցման ենթակա չեն Բանկի և/կամ Բանկի աշխատակցի կողմից:

1.11. Ստորագրելով համապատասխան հանձնարարականը՝ Հաճախորդը պարտավոր է ստուգել հանձնարարականում լրացված տվյալների ճշտությունը և ամբողջականությունը: Հաճախորդն ինքն է կրում իր կողմից տրված հանձնարարականից բխող հնարավոր բոլոր բացասական հետևանքները և ռիսկերը նույնիսկ եթե հանձնարարականը լրացվել է Բանկի աշխատակցի կողմից:

1.12. Բանկն իրավասու չէ չընդունել և չկատարել Բանկ ներկայացված այն վճարման հանձնարարականները, որոնք պարունակում են վճարման հանձնարարականը կատարելու համար բավարար վավերապայմաններ: Բանկը ստուգում է վճարման հանձնարարականի վավերապայմանների ամբողջականությունը և պատասխանատվություն չի կրում այդ վավերապայմանների ճշտության և իսկության համար, ինչպես նաև Շահառուի կամ Շահառուի Բանկի ինքնության կամ իրական լինելու համար:

1.13. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից համապատասխան հանձնարականի հիման վրա փոխանցվող գումարի կապակցությամբ՝ շահառուի կամ միջնորդ Բանկի կողմից լրացուցիչ տեղեկատվությունը պահանջելու կամ փոխանցումը կասեցնելու, գումարները սառեցնելու կամ դրանք չփոխանցելու և դրա հետևանքով առաջացած Հաճախորդի ծախսերի, կորուստների և վնասների համար:

1.14. Սույնով Հաճախորդը Բանկում բացված իր բոլոր տեսակի հաշիվներում առկա և ստացվելիք դրամական միջոցները գրավ է դնում՝ ի ապահովումն Բանկի նկատմամբ բանկային հաշվի սպասարկման և/կամ վարկավորման կապակցությամբ կամ այլ հիմքերով առա-

ջացած (այդ թվում՝ տոկոսների, միջնորդավճարների և այլ վճարների) պարտավորության պատշաճ կատարման: Հաճախորդը Բանկին իրավունք է վերապահում անակցեպտ կարգով և առանց լրացուցիչ երկկողմանի փաստաթուղթ կազմելու, իրականացնել նշված միջոցների և իր նկատմամբ նշված հիմքերով առաջացած (առկա) պարտավորությունների հաշվանց:

1.15. Հաճախորդը պարտավոր է Բանկին տեղեկացնել Բանկում առկա և/կամ ստացվելիք իր դրամական միջոցների և այլ արժեքների գրավադրման վերաբերյալ:

1.16. Բանկին ներկայացված այն անձանց լիազորությունները, որոնք լիազորված են Հաճախորդի անունից գործարքներ իրականացնել Բանկի հետ կամ այլ կերպ ներկայացնել Հաճախորդի շահերը Բանկի հետ իրականացվող գործարքներում, համարվում են օրինական ուժ ունեցող տրման պահից մինչև 3 (երեք) տարի կամ մինչև այն պահը, երբ դրանք չեղյալ են հայտարարվում Բանկին գրավոր տեղեկացնելով: Գրավոր տեղեկացումը պարտադիր է անգամ այն դեպքում, երբ լիազորված անձանց փոփոխությունները կամ նրանց տրված լիազորությունների կասեցումը նշված են լինում այլ փաստաթղթերի մեջ:

1.17. Հաճախորդը պարտավոր է Բանկին անհապաղ տեղեկացնել վճարային փաստաթղթեր ստորագրելու իրավունք ունեցող անձանց (ղեկավարների), իր անվան, կարգավիճակի, հասցեի և իր կողմից ներկայացված փաստաթղթերում պարունակվող այլ տվյալների փոփոխությունների վերաբերյալ, կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման մասին: Սույն կետում նշված և համապատասխան այլ տվյալների փոփոխության վերաբերյալ Բանկին չտեղեկացնելու արդյունքում առաջացած բոլոր վնասները և բացասական հետևանքները կրում է Հաճախորդը:

1.18. «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» (FATCA) ԱՄՆ օրենքի պահանջների համաձայն ԱՄՆ հարկատու դառնալու պահից սկսած 90 օրվա ընթացքում հաճախորդը պարտավոր է Բանկին տեղեկացնել այդ մասին և լրացնել պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև համաձայնություն տալ, որպեսզի Բանկն իր հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրի ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը: Համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հրաժարվելու դեպքում Բանկն իրավունք ունի փակել Հաճախորդի հաշիվները՝ սույն պայմաններով սահմանված կարգով:

1.19. Միանալով սույն պայմաններին՝ հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ ՀՀ, ինչպես նաև ՀՀ տարածքում կիրառման ենթակա օտարերկրյա և միջազգային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իր մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակվեն երրորդ անձանց (օրինակ՝ ՀՀ և օտարերկրյա հարկային մարմիններ, նաև ԱՄՆ հարկային ծառայություն (IRS), միջազգային գործընկերներ, արտաքին աուդիտորներ և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ անձինք):

1.20. Հաճախորդի կողմից գործառնություններ (գործարքներ) կատարելու, այդ թվում՝ իր Բանկային հաշիվներով, և/կամ Բանկի կողմից մատուցվող այլ ծառայություններ ստանալու նպատակով երրորդ անձանց լիազորագրեր (այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված) տալու դեպքում և նշված լիազորագրերի օրինականության կապակցությամբ կասկածներ առաջանալու դեպքում Բանկն իրավունք ունի նշված լիազորագրերի իսկությունը պարզելու նպատակով Հաճախորդից ստանալ համապատասխան հաստատում կամ նշված լիազորագրերն ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննության, և Բանկը պատասխանատվություն չի կրում այս կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

1.21. Հաճախորդը պատասխանատու է այն վնասների կամ կորուստների համար, որոնք կրում է Բանկն այն պատճառով, որ Հաճախորդը ժամանակին չի տեղեկացրել Բանկին իր կամ իր ներկայացուցչի իրավունքների սահմանափակման, կամ իր հանձնարարականների

համաձայն Բանկի հետ գործարքներ վարող որևէ երրորդ անձի լիազորությունների սահմանափակման մասին:

1.22. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության, հետևաբար նաև՝ Հաճախորդի հաշվից կեղծ կամ անօրինական հանձնարարականների հիման վրա դրամական միջոցների ելքագրման համար այն դեպքերում, երբ հանձնարարականում առկա ստորագրությունը և/կամ կնիքի դրոշմը արտաքին տեսքից համընկնում է/են Հաճախորդի ստորագրության նմուշների քարտում առկա ստորագրությունների և/կամ կնիքի դրոշմի հետ, իսկ էլեկտրոնային եղանակով տրված հանձնարարականների դեպքում՝ էլեկտրոնային-բանալիների ապօրինի օգտագործման հետևանքով առաջացած վնասների համար:

1.23. Բանկը պատասխանատվություն չի կրում այն բանավոր տեղեկատվության և/կամ խորհուրդների համար, որոնց վերաբերյալ Հաճախորդն ինքնուրույն որոշում է կայացնում՝ հաշվի առնելով գործարքի ֆինանսական հետևանքները: Բանկի կողմից Հաճախորդին տրված բանավոր տեղեկատվությունը և/կամ խորհուրդները ոչ մի դեպքում չեն կարող համարվել պայմանագրային պարտականությունների կատարում:

1.24. Հաճախորդը պարտավոր է Բանկի պահանջով ներկայացնել գրավոր կամ բանավոր բացատրություններ և պարզաբանումներ, առաջարկվող կամ կնքված գործարքների վավերությունը, իրավաչափությունը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի ծագման օրինականությունը և իրական պատկանելիությունը, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կամ իրական շահառուներին բացահայտելու համար:

1.25. Ե՛վ Բանկը, և՛ Հաճախորդը պարտավորվում են ապահովել ստացված ֆինանսական, առևտրային, բանկային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն և՛ Բանկի, և՛ Հաճախորդի գրավոր համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

1.26. Օրենքով սահմանված դեպքերում Բանկը հանդիսանում է Հաճախորդի հարկային գործակալը Բանկից ստացված տոկոսային եկամուտներից՝ եկամտահարկի, շահութահարկի գծով: Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես ծանուցելու Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներից դուրս գրել անհրաժեշտ բոլոր հարկերը, եթե նման պահանջ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

1.27. Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ, տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, ինչպես նաև պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

1.28. Հաճախորդը, իր անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը Բանկ ներկայացնելով համաձայնում է, որ Բանկը հայտեր/պայմանագրեր կազմելու և կնքելու նպատակով հարցում կատարի ցանկացած տեղեկատվական կենտրոն (և/կամ ֆիզիկական անձանց անձնական տվյալները տիրապետող այլ անձի/սուբյեկտի) և ստանա հասանելի տեղեկություններ՝ համապատասխան անձնական տվյալները գեներացնելով հայտում/պայմանագրում: Ի լրումն սույն կետում նշված պայմանի՝ մինչ համապատասխան հայտի/պայմանագրի կնքումը Հաճախորդի սույն կետով տրված համաձայնությունը հաստատվում է գրավոր եղանակով, իսկ հայտի/պայմանագրի կնքման դեպքում նրա համաձայնությունը համարվում է տրված Պայմաններին միանալու ուժով:

1.29. Հաճախորդը համաձայնվում է, որ Բանկը, անկախ Հաճախորդի կողմից վարկային պարտավորություններ ստանձնելու/ունենալու հանգամանքից, ձևավորի/ստանա բանկային

նույնականացուցիչ (Bank ID), որի համար Հաճախորդի մասին տեղեկությունները մուտքագրի ՀՀ ԿԲ վարկային ռեգիստիր:

1.30. Բանկն իրավունք ունի օգտագործել Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և այլ հաղորդակցման տվյալները Հաճախորդին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական, գովազդային բնույթի հաղորդագրություններ ուղարկելու նպատակով: Տեղեկատվական բնույթի հաղորդագրությունը ներառում է հաշիվների քաղվածքները, Բանկի ծառայությունների պայմանների, կողմերի միջև հաղորդակցման կարգի, կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանման, փոփոխման կամ դադարեցման, Բանկի ծառայությունների և տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող օրենքների, նորմատիվ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Հաճախորդի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի, մարումների վերաբերյալ և պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկի կողմից կիրառված (կիրառվող) պատասխանատվության միջոցների, դրանց կիրառման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը:

1.31. Փոստային կամ էլեկտրոնային կապի, ինչպես նաև բջջային հեռախոսակապի կարճ հաղորդագրության (SMS) միջոցով ծանուցման դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված վերջինիս հասցեագրված Բանկի հաղորդագրությունը Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված փոստային հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվելու դեպքում: Հաճախորդի կողմից Բանկի ծանուցումը չստանալը չի կարող որակվել որպես Բանկի կողմից իր ծանուցման պարտավորության չկատարում կամ ոչ պատշաճ կատարում: Հաճախորդը համաձայնվում է, որ Բանկի կողմից Հաճախորդի նշած հասցեով ուղարկված ծանուցումները/գրությունները այդ հասցեում այլ անձի կողմից ստանալը չի համարվում բանկային գաղտնիքի ապօրինի բացահայտում, և Հաճախորդը պարտավորվում է այդ կապակցությամբ Բանկին որևէ պահանջ չներկայացնել:

1.32. Կողմերն ընդունում են, որ Պայմաններով սահմանված դեպքերում էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի հաշիվներով գործողություններ կատարելու համար: Այն դեպքերում, երբ փաստաթղթերի ներկայացումն իրականացվում է հեռահար համակարգերի միջոցով՝ սույն կետով սահմանված դրույթները վերաբերում են նաև Հաճախորդից նշված համակարգերի միջոցով ստացվող փաստաթղթերին: Ընդ որում, սույն կետում նշված եղանակներով Հաճախորդին տրամադրվող (Հաճախորդից ստացվող) տվյալների (տեղեկատվության) հիման վրա կատարվող գործողություններից (որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուց) բխող իրավական հետևանքների ռիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը:

1.33. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի և իր/իր ներկայացուցչի միջև Բանկի տարածքում կամ իրական ժամանակի ռեժիմում հեռահար ցանկացած կապի օգտագործմամբ զրույցը, անվտանգության նկատառումներից ելնելով, կարող է ամբողջությամբ ձայնագրվել, և այդ ձայնագրությունը կարող է ունենալ ապացուցողական նշանակություն և օգտագործվել Բանկի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

1.34. Հաճախորդը տեղեկացված է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից:

Հաճախորդը գիտակցում է նաև, որ իր կողմից նշված փոստային հասցեով իրեն ուղարկվող տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ երրորդ անձանց Բանկի կամքից անկախ պատճառներով: Այդ կապակցությամբ Հաճախորդը հաստատում է, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ վերը նշված պատճառներով տեղեկատվությունն ուշացումով ստանալու կամ այդ տեղեկատվությունը Բանկի կամքից անկախ պատճառներով կամ ոչ Բանկի մեղքով երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:

1.35. Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ Բանկից իր էլեկտրոնային փոստին ուղարկված հաղորդագրությունները և որևէ կցված նյութ համարվում է գաղտնիք: Հաղորդագրությունն իրեն ուղղված չլինելու պարագայում, պարտավորվում է անմիջապես տեղեկացնել ուղարկողին և հեռացնել այն իր կողմից օգտագործվող բոլոր համակարգերից: Հաղորդագրությունը որևէ նպատակով օգտագործելն արգելվում է: Էլեկտրոնային փոստի միջոցով նամակագրությունը կրում է տեղեկատվական բնույթ, քանի դեռ Բանկի հետ կնքված գործարքներով համաձայնություն ձեռք չի բերվել՝ էլեկտրոնային փոստի միջոցով իրավաբանորեն պարտավորեցնող փաստաթղթեր կամ տեղեկատվություն փոխանակել:

1.36. Հաճախորդը պատասխանատու է Բանկի կրած բոլոր այն ծախսերի, կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են սույն Պայմաններով, առանձին ծառայության պայմաններով սահմանված Հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Բանկից գանձված ծախսերի համար:

1.37. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա Բանկի միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում Բանկի թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ (նաև մասնակի) սահմանել և կիրառել որոշակի երկրի քաղաքացիություն (գրանցում) կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց, ծառայությունների և ապրանքների դիմաց վճարումների նկատմամբ: Նման սահմանափակումների հետևանքով կարող են արգելվել հաշիվների սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունը, կարող են նաև կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ (օրինակ՝ վճարային քարտերի տրամադրման/սպասարկման, արտարժութային հաշիվների բացման և/կամ սպասարկման և դրանցով փոխանցումների և ստացումների կատարման արգելք):

1.38. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

1.39. Հաճախորդի մահվան, անգործունակության, անվճարունակության, սնանկացման, լուծարման դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային գործառնությունների կամ ծառայությունների տրամադրման համար, քանի դեռ չի ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում՝ բավարար փաստաթղթային ապացույցներ: Պատշաճ ծանուցում ստանալու դեպքում Բանկն ամենաուշը հաջորդ աշխատանքային օրվանից կասեցնում է բանկային հաշվով բոլոր գործառնությունները և ծառայությունների տրամադրումը մինչև Հաճախորդի իրավահաջորդի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից գործառնություններ իրականացնելու համար պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը: Բանկն իրավունք ունի կասեցնել նաև այն դեպ-

քում, երբ սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացել այլ՝ Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:

1.40. ՀՀ օրենսդրության պահանջների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային և օտարերկրյա պատժամիջոցների հիման վրա Բանկի միակողմանի ստանձնած պարտավորությունների արդյունքում Բանկի թղթակից բանկերի պահանջով կամ Բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է սահմանափակումներ կամ արգելքներ սահմանել և կիրառել որոշակի երկրի քաղաքացիություն (գրանցում) կամ ռեզիդենտություն ունեցող և/կամ առանձին խմբի դասվող անձանց նկատմամբ: Նման սահմանափակումների արդյունքում կարող են ինչպես արգելվել հաշիվների սպասարկումն ու Հաճախորդի հետ համագործակցությունն ընդհանրապես, այնպես էլ կարող են կիրառվել առանձին ծառայությունների գծով սահմանափակումներ (օրինակ՝ միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք, արտարժութային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք):

1.41. Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ՀՀ օրենսդրության պահանջների՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված/տնօրինվող/ստացված միջոցների շրջանառությունն արգելված է: Հաշվի առնելով օրենսդրության պահանջները և հետևելով փողերի լվացման վերաբերյալ միջազգային իրավական նորմերին և ընդունված փորձին՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարել ցանկացած գումարների/արժեքների ծագման մասին, որոնք մուտքագրված են կամ մուտքագրվում են Հաճախորդի կողմից կամ Հաճախորդի անվամբ, ինչպես նաև ելքագրվում են Հաճախորդի հաշվից կամ անունից: Բանկն իրավունք ունի պահանջել իրեն ներկայացնել բավարար ապացույցներ այդ միջոցների ծագման օրինականության վերաբերյալ: Բանկն իրավունք ունի արգելել և կասեցնել կասկածելի գումարների տնօրինումը և/կամ օգտագործումը և/կամ տիրապետումը Հաճախորդի կողմից մինչև բավարար ապացույցներ ներկայացնելը/ստանալը: Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բանկին վերը նշվածի կապակցությամբ պատճառված բոլոր տեսակի վնասները և ծախսերը: Հաճախորդը գիտակցում և համաձայնվում է, որ Բանկը պարտավոր է կատարել օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավապահ մարմինների պահանջները, որոնք վերաբերում են ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը: Բանկը և Բանկի գործընկեր (կոնտրագենտ) հանդիսացող որևէ այլ կազմակերպություն պատասխանատվություն չեն կրում որևէ անձի կողմից կրած ուղղակի կամ անուղղակի ծախսերի և վնասների համար (ներառյալ սպասվելիք եկամտի կամ տոկոսների կորուստը), եթե այդպիսիք ամբողջությամբ կամ մասամբ առաջացել են Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների և ՀՀ օրենսդրության այլ դրույթների հետ կապված պահանջները/գործողությունները կատարելու հետևանքով: Բանկի ներքին կարգերով և/կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման մասին ՀՀ իրավական ակտերով, միջազգային պատժամիջոցներովնախատեսված դեպքերում և կարգով Բանկն իրավասու է մերժել Հաճախորդի կողմից գործարքի կատարումը կամ Հաճախորդի հետ գործարար հարաբերությունների հաստատումը կամ դադարեցնել առկա հարաբերությունները:

1.42. Բանկի և Հաճախորդի միջև գործնական հարաբերությունները հիմնվում են բարեխղճության, պատշաճ գործնական էթիկայի և փոխադարձ վստահության վրա: Բանկը պատրաստ է ցանկացած ժամանակ կատարել Հաճախորդի հանձնարարականները Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների սահմաններում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին ակտերի: Հաճախորդը կարող է համոզված լինել, որ Բանկը կկատարի նրա հանձ-

նարարականները բարեխղճորեն և կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները Հաճախորդի շահերը պաշտպանելու համար բոլոր հնարավոր դեպքերում:

1.43. Հաճախորդը հնարավորություն ունի Բանկի և Հաճախորդի միջև սույն պայմանների շրջանակում կնքվող գործարքներից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

1.44. Բանկը կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

2.1. Սույն պայմանները կիրառվում են Բանկում Հաճախորդի բոլոր բանկային հաշիվների նկատմամբ՝ անկախ արժույթից և տեսակից: Բանկային հաշվի բացման համար Հաճախորդից պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Բանկի կողմից և կարող է պարբերաբար փոփոխվել:

2.2. Բանկը հաշիվներ չի բացում այն անձանց համար, իսկ բացված հաշիվներով սպասարկում չի իրականացնում այն անձանց, որոնք իրականացնում են զենքի և/կամ զինամթերքի արտադրություն, մատակարարում, իրացում, բացառությամբ որսորդական զենք, զինամթերքի, ինչպես նաև հաշիվներ չի բացում այն հանձանց համար՝ ում հետ հետագա համագործակցության հեռանկարներ չի տեսնում: Բանկը կարող է սահմանափակել ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային ոլորտներում ներգրավված կամ գործունեություն իրականացնող անձանց հետ գործարար հարաբերության հաստատումը, գործարքների իրականացումը և ֆինանսավորումը: Բանկը, որպես կանոն, չի բացում և չի սպասարկում իր կողմից որդեգրած քաղաքականությանը չհամատասխանող ոլորտների և/կամ անձանց հաշիվներ:

2.3. Բանկն ապահովվում է Հաճախորդի բանկային հաշվի պատշաճ սպասարկումը տվյալ տեսակի հաշիվների համար՝ օրենքով, իր ներքին ակտերով և սույն պայմաններով սահմանված կարգով:

2.4. Ստորագրելով բանկային հաշվի բացման դիմումը՝ Հաճախորդը հաստատում է, որ իր միջոցները գոյացել են օրինական աղբյուրից:

2.5. Բանկում բացված համատեղ Հաշվի դրամական միջոցներից կարող են օգտվել համատեղ շահառուներից յուրաքանչյուրը՝ ամբողջովին կամ մասնակիորեն՝ առանց մնացած շահառուների իմացության կամ համատեղ մասնակցության, եթե չկան այլ հրահանգներ շահառուների կողմից: Համատեղ հաշիվները կարող են բացվել միայն պետական գրանցում ունեցող ամուսինների համար, Բանկի համաձայնության դեպքում: Մնացած բոլոր դեպքերում Բանկի իրավունք ունի չբացել համատեղ հաշիվներ:

2.6. Հաճախորդի հանձնարարականով բոլոր գործառնություններն իրականացվում են Հաճախորդի Հաշվի մնացորդի սահմաններում:

2.7. Բանկային հաշիվներով գործառնությունների իրականացման ժամկետները որոշվում են Բանկի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հիմնական պայմաններով, Բանկի կողմից սահմանված այլ ներքին և/կամ ՀՀ իրավական ակտերով:

2.8. Բանկն ընդունում և կատարում է Հաճախորդի հանձնարարականները՝ ըստ դրանց Բանկ մուտքագրման օրացուցային հաջորդականության: Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 923 հոդվածի 2-րդ մասով սահմանված հաջորդականությամբ: Բանկը կատարում է Հաճախորդի՝ հաշվով գործարք կատարելու հանձնարարականը, եթե Հաճախորդի հաշիվ(ներ)ին առկա է բավարար գումար, և այդ գումարը ծանրաբեռնված չէ այլ պարտավորություններով, արգելանքներով, սահմանափակումներով:

2.9. Բանկը Հաճախորդի Հաշվին փոխանցված դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերը Բանկ մուտք լինելու օրը՝ եթե դրանք ստացվել են մինչև ժամը 16:00-ն, կամ հաջորդ աշխատանքային օրը՝ եթե դրանք ստացվել են ժամը 16:00-ից հետո:

2.10. Եթե Հաճախորդի Հաշվին միջոցների մուտքագրման հանձնարարականները տրված են մեկ արժույթով, իսկ Հաճախորդի Հաշիվն այլ արժույթով է, ապա Բանկը մուտքագրում է միջոցներն այն արժույթով, որով բացված է Հաճախորդի Հաշիվը՝ մուտքագրման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի փոխարկային փոխարժեքներով, եթե Հաճախորդի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվում

2.11. Բանկը Հաճախորդի հանձնարարականով վերջինիս Հաշվից դրամական միջոցներ փոխանցում է վճարման հանձնարարականի կատարման օրը, եթե Բանկում հանձնարարականն ընդունվել է մինչև կատարման օրվա ժամը 15:00-ն, կամ վճարման հանձնարարականի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրը, եթե Բանկում հանձնարարականն ընդունվել է կատարման օրվա ժամը 15:00-ից հետո:

2.12. Բանկն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հաճախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները նրա Հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք Բանկի կողմից նրա Հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին Հաճախորդի հանձնարարականները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությամբ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսանկյունից գործարքի պարզաբանման, թղթակից բանկերի հարցումներին պատասխանելու անհրաժեշտությամբ պայմանավորված քայլերի իրականացման անհրաժեշտություն է առաջանում, ինչպես նաև երբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությանը և միջազգային պատժամիջոցներին չհամապատասխանելու ռիսկեր կամ կասկածներ են առկա:

2.13. Համապատասխան պայմանավորվածության բացակայության դեպքում, Բանկն ինքն է իր հայեցողությամբ ընտրում գումարի փոխանցման ճանապարհն ու գործարքային փաստաթղթերի ուղարկման ձևը:

2.14. Այն դեպքերում, երբ Հաճախորդի Հաշվից միջոցների ելքագրումը կամ նրա Հաշվին միջոցների մուտքագրումը կատարվել են առանց համապատասխան հրահանգների (հանձնարարականների)՝ սխալմամբ կամ այլ պատճառներով, Բանկը կարող է անվավեր համարել նմանօրինակ միջոցների ելքագրումը կամ մուտքագրումը՝ իր իսկ նախաձեռնությամբ անակցպետ կարգով կատարելով անհրաժեշտ հաշվապահական ձևակերպումներ:

2.15. Բանկի կողմից առաջարկվող համապատասխան տեսակի բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքները պատշաճորեն ծանուցվում են Հաճախորդին:

2.16. Բանկն իրավունք ունի՝

ա) Հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ երաշխավորելով Հաճախորդի այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը,

բ) մերժել և չկատարել Հաճախորդի հանձնարարականները, եթե նրա Հաշվին չկան բավարար միջոցներ, ինչպես նաև եթե խախտվել են ՀՀ օրենսդրության, Բանկի ներքին ակտերի և սույն պայմանների պահանջները,

գ) գործառնական օրվա ավարտից հետո Հաճախորդի բանկային հաշիվներին (անկախ արժույթից) առկա դրամական միջոցներն անակցեպտ կարգով օգտագործել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների (անկախ պարտավորության արժույթից) մարման նպատակով: Բանկն իրավունք ունի այդպիսի հաշվանցման նպատակով անհրաժեշտության դեպքում կատարել Հաճախորդի տարբեր բանկային

հաշիվներում առկա տարբեր արժույթների փոխարկում՝ գանձվելիք արժույթի համար իր կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով,

դ) իր տեսակետից Հաշիվներով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարվելու դեպքում՝ Հաճախորդից պահանջել գրավոր կամ բանավոր բացատրություն, ինչպես նաև տվյալ գործառնությունը հիմնավորող փաստաթղթեր,

ե) Հաճախորդի հետ գործարքների կնքման ընթացքում իրականացնել Բանկի տարածքում բանակցությունների տեսագրում և/կամ ձայնագրում, որոնք կարող են Հաճախորդի իրավունքների և պարտականությունների իրավական ապացույց հանդիսանալ,

զ) միակողմանի և անակնկալ կարգով փակել համ կասեցնել Հաճախորդի Հաշիվը՝

1) եթե տվյալ Հաշվով մեկ տարվա ընթացքում որևէ գործառնություն չի կատարվել,

2) եթե վերջինս Բանկի պահանջով չի ներկայացրել գրավոր կամ բանավոր բացատրություններ և պարզաբանումներ առաջարկվող կամ կնքված գործարքների վավերության, իրավաչափության, կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի ծագման օրինականության և իրական պատկանելիության, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կամ իրական շահառուների մասին տեղեկատվության բացահայտման համար,

3) Հաճախորդը կամ նրա գործունեությունը և գործողությունները դարձել են կասկածելի՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի դրույթներին համապատասխան,

4) Հաճախորդը չի ապահովում Բանկի կողմից սահմանված պայմանները (չնվազող մնացորդ, միջին օրական մնացորդի նվազագույն պահանջ և այլն),

5) Հաճախորդը չի վճարել նախորդ ժամանակաշրջանի՝ Բանկի սակագներով սահմանված վճարները,

6) Հաճախորդի ցանկությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա,

7) եթե Հաճախորդը հրաժարվում է տեղեկություններ տրամադրել իր ռեզիդենտության/հարկային ռեզիդենտության, այդ թվում՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու վերաբերյալ և ստորագրել պահանջվող փաստաթղթերը,

8) եթե Հաճախորդն սկսել է իրականացնել այնպիսի տեսակի գործարքներ, որոնք ի սկզբանե՝ հաշիվ բացելու ժամանակ, չի ներկայացրել Բանկին կամ չի համապատասխանում իր գործարար բնույթին,

9) եթե Հաճախորդի գործունեությունը կամ վերջինիս հետ գործարար հարաբերությունը Բանկի կարծիքով կարող է որևէ կերպ գործընկեր կամ միջազգային կազմակերպությունների մոտ առաջացնել Բանկի կողմից Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ոչ արդյունավետ մեխանիզմների կիրառման կասկածներ և/կամ բացասական ազդեցություն ունենալ Բանկի հեղինակության վրա (օրինակ, եթե Հաճախորդը կամ նրա հետ փոխկապակցված անձինք հայտնվում են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության Խորհրդի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կամ Եվրամիության կամ այլ հատուկ ցուցակված անձանց (սանկցիոն) ցանկերից որևէ մեկում),

10) եթե լրացել է բանկային հաշվի պայմանագրի ժամկետը,

11) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2.17. Հաճախորդը պարտավոր է՝

ա) պահպանել ՀՀ օրենսդրությամբ, սույն պայմաններով և Բանկի ներքին այլ ակտերով սահմանված՝ բանկային հաշվով գործառնությունների իրականացման պահանջները,

բ) Բանկի կողմից սահմանված Սակագներին համապատասխան Բանկին վճարել Հաշվի բացման և յուրաքանչյուր գործառնության համար սահմանված միջնորդավճարները:

2.18. Հաճախորդն իրավունք ունի՝

ա) ինքնուրույն տնօրինել իր Հաշիվներում առկա դրամական միջոցները՝ ՀՀ օրենսդրությամբ, Բանկի ներքին ակտերով և սույն պայմաններով սահմանված կարգով,

բ) ներկայացնել իր կողմից ներկայացված վճարման հանձնարարական(ներ)ը չեղյալ համարելու դիմում(ներ)՝ ամբողջությամբ փոխհատուցելով դրա հետևանքով Բանկի կրած ծախսերն ու վնասները, ընդ որում՝ Բանկը որևէ պարտավորություն չի կրում այդ դիմումի բավարարման կամ կատարման համար, եթե գումարն արդեն վճարվել է շահառուին, և/կամ երբ այն չի կարող բավարարվել համապատասխան թղթակից կամ գործընկեր բանկի կողմից,

գ) Բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակման դեպքում՝ Բանկից պահանջել պատճառված իրական վնասի փոխհատուցում:

2.19. Հաճախորդի Հաշիվները կարող են փակվել սեփական դիմումի հիման վրա: Հաշիվը փակվելիս Հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը կանխիկ տրվում է Հաճախորդին կամ նրա հանձնարարականով փոխանցվում է այլ Հաշվին:

Բանկի նախաձեռնությամբ Հաճախորդի հաշիվները փակվելու դեպքում հաշվում եղած դրամական միջոցները փոխանցվում է Հաճախորդի՝ Բանկին հայտնի, այլ բանկում առկա հաշվին կամ պահվում է Բանկում և կանխիկ տրվում է Հաճախորդին՝ նրա առաջին իսկ պահանջով:

2.20. Հաճախորդի հաշիվ(ներ)ը ենթակա չէ փակման, եթե դրա(նց) վրա առկա է(են) արգելանք(ներ) և/կամ հաշիվ(ներ)ը ծանրաբեռնված է(են) գրավով և չկա հաշիվ(ներ)ը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

2.21. Հաշվի քաղվածքը Բանկը տրամադրում է Հաճախորդին՝ բանկային հաշվի բացման դիմումի մեջ ընտրված եղանակով: Բանկը Հաճախորդի Հաշվի քաղվածքը տրամադրում է վերջինիս Հաշվով իրականացված յուրաքանչյուր գործարքից հետո, ինչպես նաև ցանկացած ժամանակ՝ նրա պահանջով: Բանկից ստացված քաղվածքների և գրությունների վերաբերյալ առարկությունները պետք է ներկայացվեն դրանց ստացման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Առարկությունները ժամանակին չներկայացնելն ընդունվում է որպես համաձայնություն՝ ուղարկված քաղվածքների և գրությունների բովանդակության նկատմամբ: Քաղվածք է համարվում Բանկի կողմից թղթային կնքված եղանակով կամ էլեկտրոնային բանալիով հաստատված էլեկտրոնային քաղվածքը, որը Բանկը տրամադրում է գործառնական օրն ավարտվելուց հետո: Հաշվով/հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ մնացած բոլոր փաստաթղթերը կրում են տեղեկատվական բնույթ և չեն կարող հիմք հանդիսանալ Բանկի նկատմամբ որևէ պահանջ ներկայացնելու համար:

2.22. Բանկը Հաճախորդին կամ վերջինիս կողմից լիազորված անձին Հաշվի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում Հաճախորդի կամ լիազորված անձի կողմից յուրաքանչյուր գրավոր պահանջի կամ Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված այլ եղանակով ներկայացված պահանջի հիման վրա:

2.23. Եթե Հաճախորդի կողմից կանխիկացվող գումարի մեծությունը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը, Հաշվից դրամական միջոցները տրվում են կանխիկի ստացման հայտի հիման վրա, որը պետք է ներկայացվի նախապես՝ 1 (մեկ) աշխատանքային օր առաջ:

2.24. Սույն պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.25. Հատուկ բանկային հաշիվներ.

2.25.1. Հատուկ բանկային հաշիվներն այն հաշիվներն են, որոնցում ներդրված միջոցները՝

1) ՀՀ նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ կարող են օգտագործվել միայն սույն կետի դրույթների հիման վրա կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղղություններով, դեպքերում, պայմաններով կամ գործառնություններով, և/կամ

2) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել Հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ Հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2.25.2. Հատուկ բանկային հաշվում ներդրված միջոցները կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.25.3. Հատուկ բանկային հաշվի փակման դեպքում տվյալ հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը փոխանցվում է տվյալ Հաճախորդի համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին կամ վերադարձվում է՝ համապատասխան դրամական միջոցները մուտք արած անձին, բացառությամբ Հաճախորդի հետ կնքված այլ պայմանագրով, այլ իրավական ակտերով և/կամ սույն ակտով սահմանված դեպքերի:

2.25.4. Հաճախորդը Բանկի ծառայությունների դիմաց վճարում է իր հատուկ բանկային հաշվով կատարվող գործառնությունների համար: Ընդ որում, Բանկի ծառայությունների համար վճարը Բանկը չի գանձում Հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած միջոցներից, բացառությամբ վճարված տոկոսների:

2.25.5. Հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկը տոկոսները վճարում է Հաճախորդին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ: Սույն կետով նախատեսված տոկոսների գումարը մուտքագրվում է հատուկ բանկային հաշվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ կամ կողմերի համաձայնությամբ:

2.25.6. Հատուկ բանկային հաշվի միջոցների հաշվին հատուկ բանկային հաշվի տիրոջ և Բանկի՝ հատուկ բանկային հաշվի տիրոջ նկատմամբ ունեցած ցանկացած հանդիպական պահանջների հաշվանց չի իրականացվում: Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի վերաբերում վճարված տոկոսներից ձևավորված միջոցների չափով հաշվանց կատարելուն, իսկ սոցիալական փաթեթի հաշվի դեպքում՝ նաև տվյալ հաշվում առկա ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշվանց կատարելուն:

2.26. Վճարման հանձնարարականում նշված կատարման կամ վճարման օրվանից հետո հինգերորդ աշխատանքային օրվա ավարտի պահին Բանկի կողմից չակցեպտավորված վճարման հանձնարարականը կարող է չեղյալ համարվել:

2.27. Հաճախորդը կարող է չեղարկել Բանկին տրված վճարման հանձնարարականը համաձայն Սակագների: Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումար(ներ)ի վերադարձման համար:

2.28. Բանկը կամ նրա գործակալները (գործընկերները) պատասխանատու չեն Հաճախորդի մեղքով վճարման հանձնարարականի, չեկի, մուրհակի և այլ գործիքի կորստի, վնասման կամ մերժման, չմուտքագրման, ուշ վճարման կամ ներկայացման, չեկի կամ այլ գործիքի բանկային հաշվին ուշ մուտքագրման, չվճարման կամ վերադարձման համար: Բանկը կամ նրա գործակալները (գործընկերները) պատասխանատու չեն Հաճախորդի կողմից ներկա-

յացված վճարման հանձնարարականի հիման վրա կատարված դրամական միջոցների փոխանցումները այլ երկրների օրենսդրությանը համապատասխան կասեցվելու և/կամ փոխանցվող գումարները սառեցվելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար: Բանկը կամ նրա գործակալները պարտավորվում են Հաճախորդի գործարքները կատարել հնարավորին չափ արդյունավետ եղանակով՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

2.29. Բանկի կողմից մատուցվող դրամարկղային ծառայություններից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է անմիջապես տեղում ստուգել գործարքի արդյունքում ձևավորվող վճարային փաստաթուղթը և իրավունք ունի իրականացնել կանխիկ դրամական միջոցների հաշվարկ, և անճշտությունների հայտնաբերման դեպքում հայտնել Բանկին այդ մասին: Սույն կետով սահմանված իրավունքից չօգտվելու կամ հետագայում գործարքը բողոքարկվելու դեպքում Բանկի տեսաձայնագրման համակարգի միջոցով կատարված ձայնագրություններով անճշտության պատճառները չպարզվելու դեպքում անճշտությունների բացասական հետևանքը կրում է Հաճախորդը: Սույն կետի իմաստով անճշտություն է համարվում կանխիկով գործառնություն իրականացնելու արդյունքում ձևավորված ավելցուկը, պակասորդը, անվճարունակ և կեղծ թղթադրամների, մետաղադրամների հայտնաբերումը, վճարային փաստաթղթերում առկա սխալները: Ընդ որում՝ Հաճախորդի պակաս գումար մուտքագրելու կամ Հաճախորդին ավել գումար սխալմամբ տրամադրելու դեպքում Հաճախորդը պարտավոր է լրացնել պակաս մուտքագրված գումարը և հետ վերադարձնել իրեն ավել տրամադրված գումարը, թեկուզև նշված դեպքերը բացահայտվում են Հաճախորդի՝ Բանկից հեռանալուց հետո:

3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ

3.1. Ստորև բերված պայմանները կարգավորում են Բանկի և բանկային ավանդի ներդրման վերաբերյալ փաստաթղթի՝ Բանկի կողմից հաստատված տիպային ձևը ստորագրող Հաճախորդի միջև հարաբերությունները:

3.2. Բանկային ավանդների՝ Բանկի կողմից առաջարկվող տոկոսադրույքները պատշաճորեն ծանուցվում են Հաճախորդներին:

3.3. Ժամկետային ավանդ ներդնելու պահին Բանկի կողմից հայտարարված տոկոսադրույքը մնում է անփոփոխ ավանդի ներդրման ողջ ժամանակահատվածում:

3.4. Բանկը Հաճախորդին ավանդի դիմաց տոկոսագումար է հաշվեգրում՝ ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից սկսած մինչև այն ավանդատուին վերադարձնելու օրվա նախորդող օրը: Ավանդի գծով հաշվեգրված տոկոսագումարի դիմաց Բանկը տոկոսներ չի հավելագրում:

3.5. Ավանդի և հաշվեգրված տոկոսագումարի վճարումը կատարվում է ավանդի ժամկետը լրանալիս, կամ այլ կերպ՝ Բանկի և Հաճախորդի համաձայնությամբ, անկանխիկ՝ Բանկում Հաճախորդի անունով բացված համապատասխան բանկային հաշվին մուտքագրելու միջոցով: Հաշվեգրված տոկոսագումարը, անկախ ավանդի արժույթից, կարող է վճարվել ՀՀ դրամով կամ ավանդի արժույթով:

3.6. Ավանդի վերադարձման ժամկետը չերկարաձգվելու դեպքում ավանդի գումարը և չվճարված տոկոսները փոխանցվում են Հաճախորդի բանկային հաշվին՝ առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

3.7. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ենթակա են վերադարձման՝ ավանդատուի առաջին իսկ պահանջով: Իրավաբանական անձանց ժամկետային ավանդները վաղաժամկետ վերադարձվում են միայն Բանկի համաձայնությամբ:

3.8. Ավանդատուի պահանջով, կամ Բանկից անկախ այլ հանգամանքներում, ժամկետից շուտ ավանդը վերադարձնելու կամ բռնագանձվելու դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ, ավանդի դիմաց վճարելով տոկոսագումար և գանձում է ավանդի գումարից արդեն իսկ վճարված տոկոսագումարները՝ համաձայն Բանկի կողմից ավանդների վաղաժամկետ խզման դեպքում սահմանված պայմանների, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի հետ կնքված Ավանդի պայմանագրով կամ Բանկի և Հաճախորդի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով:

3.9. Բանկը մինչև ավանդի վերադարձը ինքնուրույնաբար է տնօրինում ավանդի գումարը: Բանկն ավանդի Հաշվի վրա ավանդի գումարի մուտքագրման օրը ավանդատուին տրամադրում է ավանդի Հաշվից քաղվածք:

3.10. Մինչև ավանդի պայմանագրի կնքումը դրա հետ կապված բոլոր բանակցությունները և նամակները (այդ թվում՝ էլեկտրոնային) կրում են տեղեկատվական բնույթ, նամակները (այդ թվում՝ էլեկտրոնային) չեն հանդիսանում Բանկի կողմից ուղարկված պաշտոնական փաստաթուղթ և չեն կարող հիմք հանդիսանալ Բանկին որևէ պահանջ ներկայացնելու համար: Բանկը կրում է համապատասխան պարտավորություններ միայն ավանդի պայմանագրի կնքումից հետո:

4. ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Ստորև բերված պայմանները կարգավորում են Բանկի և փոխարկային գործառնության վերաբերյալ փաստաթղթի՝ Բանկի կողմից հաստատված տիպային ձևը (հայտը) ստորագրող Հաճախորդի միջև հարաբերությունները:

4.2. Ներկայացնելով պատշաճորեն լրացված փոխարկային գործառնության վերաբերյալ փաստաթղթի՝ Բանկի կողմից հաստատված տիպային ձևը (հայտը)՝ Հաճախորդը պարտավորվում է տվյալ պահին Բանկում իր անունով բացված Հաշվին ապահովել տիպային ձևում (հայտում) նշված վաճառվող արժույթի գումարը, հակառակ դեպքում Բանկը մերժում է տվյալ հայտի ընդունումը: Ընդունելով փոխարկային գործառնության վերաբերյալ փաստաթուղթը՝ Բանկն այն կատարում է տվյալ պահին Բանկի կողմից հայտարարված փոխարժեքով և ծավալների սահմաններում: Եթե Հայտում նշված ծավալը ավել է, քան Բանկի կողմից տվյալ պահին գործող ծավալային սահմանափակումը, Հաճախորդը տեղյակ է պահվում իրավիճակի մասին և հետագա գործառնություններն իրականացվում են Հաճախորդի հետ համաձայնեցված տարբերակով:

4.3. Հաճախորդի հայտերով, այդ թվում՝ հեռահար կապի միջոցներով ստացված հայտերով՝ արտարժույթի, անկանխիկ ոսկու առուվաճառքի գործառնությունները, անկախ հայտի ստացման պահից, իրականացվում են Բանկի կողմից գործարքի փաստացի կատարման պահի դրությամբ Բանկի կողմից սահմանած փոխարժեքներով և կարգով: Գործառնական ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ստացված արտարժույթի փոխանակման, անկանխիկ ոսկու առուվաճառքի հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել, կամ կընդունվեն կատարման հաջորդ բանկային օրվա ամսաթվով:

4.4. Հաճախորդը Բանկին տալիս է իրավասություն և լիազորում է փոխարկային գործառնության պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով առաջացած տույժը և ծախսերն անակնկալ կարգով գանձել Հաճախորդի Բանկում և ՀՀ ցանկացած այլ բանկում ունեցած բոլոր ընթացիկ հաշիվներից:

4.5. Կանխիկ փոխարկային գործառնության ժամանակ Բանկի կողմից հայտարարված փոխարժեք է համարվում Հաճախորդի կողմից համապատասխան կանխիկ դրամական միջոցները Բանկի զանձապահին հանձնելու պահին հրապարակված փոխարժեքը:

4.6. Կանխիկ փոխարկային գործառնության ժամանակ նույնպես Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջելու գումարի ծագման օրինականության վերաբերյալ համապատասխան հիմնավոր փաստաթղթեր: Այդ փաստաթղթերը ներկայացնելուց հրաժարվելը հիմք է Բանկի կողմից կանխիկ փոխարկային գործառնությունը չկատարելու համար:

4.7. Բանկից գնված ոսկու ձուլակտորները, ՀՀ օրենսդրության համաձայն, վերադարձման կամ փոխարինման ենթակա չեն:

5. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՀԵՌԱՀԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՎ

5.1. Սույն պայմաններով Բանկն իրականացնում է Հաճախորդի բանկային հաշիվների սպասարկում և վարում նաև Հեռահար սպասարկման համակարգերի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին Բանկ ներկայացնել էլեկտրոնային վճարային հանձնարարականներ, ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով, արտարժույթի փոխարկման հանձնարարականներ, Բանկից էլեկտրոնային եղանակով ստանալ քաղվածքներ՝ ըստ բանկային հաշիվների, ինչպես նաև Բանկի հետ փոխանակվել էլեկտրոնային հաղորդագրություններով (Ինտերնետ-Բանկ համակարգի դեպքում՝ նաև ժամկետային ավանդի համալրումներ և վարկի մարումներ), ինչպես նաև ներկայացնել Բանկի համար ընդունելի այլ հանձնանարականներ: Ընդ որում, Բանկի կողմից տրամադրված քաղվածք է համարվում Բանկի կնիքով կամ Բանկի կողմից էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ստորագրված և Հաճախորդին ուղարկված քաղվածքը, որն ուղարկվել է գործառնական օրվա ավարտից հետո: Մնացած բոլոր դեպքերում քաղվածքները չեն համարվում Բանկի կողմից տրամադրված և չեն կարող հիմք հանդիսանալ Բանկին որևէ պահանջ ներկայացնելու համար:

5.2. Ստորագրելով Բանկի կողմից հաստատված Բանկ-Հաճախորդ կամ Ինտերնետ-Բանկ համակարգի տրամադրման դիմումը՝ Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է, գիտակցում է և ընդունում է համապատասխան համակարգի օգտագործման և անվտանգության կանոնները, պատասխանատվություն է կրում Բանկի կողմից տրամադրված ծրագրերի, անվտանգությունն ապահովող սարքերի և գաղտնաբառերի՝ երրորդ անձանցից պահպանման և չհրապարակման համար:

5.3. Բանկի կողմից տրամադրված Հեռահար սպասարկման համակարգերը հանդիսանում են Բանկի սեփականությունը:

5.4. Հաճախորդի/օգտագործողի կողմից Հեռահար սպասարկման համակարգով Բանկ ուղարկված հանձնարարականն ընթացքի մեջ գտնվելը դեռևս չի նշանակում, որ այն միանշանակ կատարվել է կամ կկատարվի Բանկի կողմից: Հանձնարարականը համարվում է կատարված միայն այն պահից, երբ Հաճախորդը/օգտագործողը ստանում է հանձնարարականի կատարման վերաբերյալ հաստատումը՝ Համակարգում Բանկի կողմից հանձնարարականի կարգավիճակը փոխվելու միջոցով:

5.5. Ինտերնետ-բանկ համակարգում առկա բանկային ծառայությունների և գործառնությունների որոշ տեսակներ կարող են տարբերվել համակարգի բջջային հավելվածի կամ ինտերնետային զննարկիչի (Browser) միջոցով օգտագործելու դեպքում՝ ելնելով տեխնիկական առանձնահատկություններից:

5.6. Եվ Բանկը, և Հաճախորդը պարտավորվում են գրավոր և/կամ բանավոր կերպով անհապաղ տեղեկացնել միմյանց գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարքի (Digipass device) կորստի, գողության, առանց թուլտվության օգտագործման ցանկացած դեպքի մասին:

5.7. Բանկը պարտավոր է՝

ա) Հեռահար սպասարկման համակարգերի տրամադրման դիմումն ընդունելու պահից 5 բանկային օրվա ընթացքում Հաճախորդին տրամադրել համապատասխան համակարգի մուտքի հնարավորություն Ինտերնետային ցանցի միջոցով, Հաճախորդի գրանցման անուն, Ծածկագիր և Էլեկտրոնային բանալի, իսկ Ինտերնետ-Բանկ համակարգի դեպքում՝ գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարք՝ կազմելով հանձնման-ընդունման ակտ: Հաճախորդի պահանջով և Բանկի կողմից համաձայնություն ստանալու դեպքում, գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարք կարող է չտրամադրվել: Գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարքից հրաժարվելու դեպքում բոլոր հնարավոր ռիսկերը և վնասները կրում է Հաճախորդը:

բ) Հաճախորդից շուրջօրյա ընդունել Բանկ-Հաճախորդ և Ինտերնետ-Բանկ համակարգերով ներկայացված վճարային, արտարժույթի փոխարկման և այլ հանձնարարականներն ու կատարել դրանք համաձայն ՀՀ օրենսդրության, սույն պայմաններով և Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգի աշխատակարգով (օգտագործողի ձեռնարկով) սահմանված կարգով, ընդ որում՝ Բանկը Հաճախորդի հանձնարարականով վերջինիս Հաշվից դրամական միջոցներ փոխանցում է վճարման հանձնարարականի կատարման օրը, եթե Բանկում հանձնարարականն ընդունվել է մինչև կատարման օրվա ժամը 15:00-ն, կամ վճարման հանձնարարականի կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրը, եթե Բանկում հանձնարարականն ընդունվել է կատարման օրվա ժամը 15:00-ից հետո: Ժամը 16:30-ից հետո ստացված փոխարկման հայտերը համարվում են չընդունված, եթե դրանցում նշված փոխարժեքները չեն համապատասխանում հաջորդ աշխատանքային օրվա սկզբում Բանկի կողմից հայտարարված փոխարժեքներին:

գ) Հաճախորդի գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմումի հիման վրա ժամանակավորապես դադարեցնել Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգերի միջոցով նրա բանկային հաշիվների սպասարկումը և վարումը:

դ) Հաճախորդի պահանջով նրան տրամադրել նոր գրանցման անուն և/կամ Էլեկտրոնային բանալի:

ե) Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգի աշխատակարգի (օգտագործողի ձեռնարկի) որևէ փոփոխության դեպքում այդ մասին առնվազն 10 (տասը) օր առաջ տեղյակ պահել Հաճախորդին՝ էլեկտրոնային փոստով:

5.8. Բանկն իրավունք ունի՝

ա) չկատարել Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգ(եր)ով Հաճախորդի ներկայացրած հանձնարարականները, եթե դրանք ներկայացվել են ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, սույն պայմանների դրույթների խախտմամբ, ինչպես նաև եթե դրանք ներկայացվել են Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգի աշխատակարգի (օգտագործողի ձեռնարկի) կանոնների խախտմամբ կամ, եթե Բանկը հիմնավոր կասկածներ ունի համակարգի չարտոնագրված շահագործման վերաբերյալ: Նշված դեպքերում Բանկն անհապաղ կամ առնվազն մեկ օրվա ընթացքում այդ մասին տեղյակ է պահում Հաճախորդին,

բ) ժամանակավորապես դադարեցնել Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգ(եր)ի միջոցով Հաճախորդի բանկային հաշիվների սպասարկումը և վարումը, եթե դրանք կատարվում են Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգի աշխատակարգի (օգտագործողի ձեռնարկի) կանոնների խախտմամբ,

գ) ժամանակավորապես դադարեցնել Հաճախորդի Բանկային հաշիվների սպասարկումը Բանկ-Հաճախորդ համակարգերով, եթե Հաճախորդն ունի բանկային հաշիվների վարման և սպասարկման սակագներով նախատեսված չվճարված գումար,

դ) Հաճախորդից ստանալ լրացուցիչ բանավոր (հեռախոսակապով) հաստատում Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգով ներկայացված ցանկացած հանձնարարականի համար,

ե) անվտանգության ապահովման նպատակով պարբերաբար փոխել Հաճախորդի գրանցման անունը և էլեկտրոնային բանալիները (միայն Բանկ-Հաճախորդ համակարգի դեպքում)՝ այդ մասին առնվազն երեք օր առաջ պատշաճ կերպով տեղյակ պահելով Հաճախորդին,

զ) Հաճախորդից պահանջել լրացուցիչ պաշտպանության միջոցների ձեռնարկում,

է) Բանկն իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել հեռահար սպասարկման համակարգի օգտագործման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե ունի կասկածներ հեռահար սպասարկման համակարգի անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, զեղծարարության վտանգի առկայության վերաբերյալ,

ը) առանց Հաճախորդին նախապես ծանուցելու որոշակի բանկային ծառայությունների և գործառնությունների համար սահմանել սահմանափակումներ և/կամ սահմանաչափեր, ներառյալ՝ գործառնությունների կատարման մերժում, որոնց մասին Բանկը տեղադրում է տեղեկատվություն համակարգում կամ իր կայքում,

թ) պահանջել հաճախորդից տարին 1 անգամ փոփոխել հաճախորդի/օգտագործողի հեռահար համակարգի գաղտնաբառը: Հաճախորդի/օգտագործողի գրավոր դիմումի հիման վրա և միաժամանակ գաղտնագրությամբ կոդեր ձևավորող սարքի առկայության դեպքում հեռահար համակարգի գաղտնաբառի պարբերաբար փոփոխության պահանջը կարող է հանվել (սահմանվել անժամկետ): Հաճախորդի/օգտագործողի դիմումի հիման վրա հեռահար համակարգի գաղտնաբառի՝ անժամկետ սահմանվելու դեպքում հաճախորդը (օգտագործողը) ինքն է կրում հնարավոր բացասական բոլոր հետևանքների ռիսկը (օրինակ, այլ անձանց կողմից գաղտնաբառին հասանելիության արդյունքում կրած նյութական կամ այլ վնասներ):

5.9. Հաճախորդը պարտավոր է՝

ա) շահագործել բանկային հաշիվների՝ Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգ(եր)ը՝ խստիվ առաջնորդվելով սույն պայմաններով և Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգի աշխատակարգով (օգտագործողի ձեռնարկով) սահմանված կանոններով,

բ) անհապաղ տեղյակ պահել Բանկին համակարգ(եր)ին չարտոնագրված մուտքերի մասին, գաղտնի բանալու և գաղտնաբառերի գաղտնիության խախտման մասին,

գ) վճարել Բանկին՝ համաձայն Բանկային հաշվի բացման և վարման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Սակագների և Պայմանների,

դ) գաղտնի պահել գաղտնաբառն ու էլեկտրոնային գաղտնի բանալին և չփոխանցել երրորդ անձանց,

ե) Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին ծրագրային ապահովման միջոցների, Հաճախորդի նույնականացման և հավաստագրման միջոցների կո-

րստի, երրորդ անձանց հայտնի դառնալու կամ նման վտանգի առկայության դեպքերի մասին,

եզ անվտանգության ապահովման նպատակով անհապաղ տեղյակ պահել Բանկին Բանկ-Հաճախորդ (Ինտերնետ-Բանկ) համակարգից օգտվելու իրավունք ունեցող անձանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

5.10. Հաճախորդն իրավունք ունի՝

ա) վաղաժամկետ դադարեցնել գրանցման անվան և/կամ Էլեկտրոնային բանալու գործողության ժամկետը, գրավոր պահանջել Բանկից արգելափակել դրանք և տրամադրել նորերը,

բ) ժամանակավորապես դադարեցնել Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգ(եր)ի շահագործումը՝ այդ մասին գրավոր կամ բանավոր դիմելով Բանկին: Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգ(եր)ի շահագործման կրկին վերականգնելն իրականացվում է Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:

5.11. Բանկային հաշիվների սպասարկումը Հեռահար սպասարկման համակարգերի միջոցով հանդիսանում է բանկային հաշիվների սպասարկման տարր: Հեռահար սպասարկման համակարգերի տրամադրումը (սպասարկումը) Բանկի կողմից դադարեցվում է հաշվի (հաշիվների) սպասարկումը դադարեցնելուն (հաշիվը (հաշիվները) փակվելուն) պես: Հաճախորդն իրավունք ունի ցանկացած պահին հրաժարվել օգտվել Հեռահար սպասարկման համակարգերից:

5.12. Բանկն իրավունք ունի դադարեցնել սպասարկել բանկային հաշիվները Հեռահար սպասարկման համակարգերով՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով Հաճախորդին:

5.13. Համակարգում առկա բանկային ծառայությունների և գործառնությունների որոշ տեսակներ կարող են հասանելի չլինել Համակարգը բջջային հավելվածի կամ ինտերնետային զննարկիչի միջոցով օգտագործելու դեպքում:

5.14. Համակարգում հաճախորդը հանձնարարականները ստորագրում է (վավերացնում է) էլեկտրոնային եղանակով՝ նաև մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ մուտքագրելու միջոցով, որը համարժեք է Հաճախորդի ինքնագիր ստորագրությանը և անհրաժեշտ և բավարար պայման է Բանկի համար Հաճախորդի հանձնարարականը պատշաճ վավերացված համարելու համար՝ առաջացնելով սույն Պայմաններով սահմանված իրավունքները և պարտավորությունները:

5.15. Բանկն իրավունք ունի Համակարգի օգտագործմանը խոչընդոտող տեխնիկական վթարների կամ Համակարգի ծրագրային ապահովման թարմացման կամ փոխարինման, ինչպես նաև այլ պլանային տեխնիկական աշխատանքների ժամանակ անորոշ ժամկետով միակողմանիորեն և առանց հատուցման դադարեցնել Համակարգով Հաճախորդի սպասարկումը և կասցնել Համակարգի հասանելիությունը Հաճախորդին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված դեպքերում Հաճախորդի կրած վնասների համար:

5.16. Բանկ-Հաճախորդ և/կամ Ինտերնետ-Բանկ համակարգի/երի հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծելիս Կողմերը կարող են ներգրավել անկախ մասնագիտացված կազմակերպություններ: Անկախ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման հետ կապված ծախսերը կատարում է շահագրգիռ կողմը:

6. SMS-ԻՆՖՈ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմաններով Բանկն իրականացնում է Հաճախորդին SMS-ինֆո ծառայության մատուցում, որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում կարճ տեքստային հաղորդագրության (այսուհետ՝ SMS հաղորդագրության) միջոցով ստանալ տեղեկատվություն ինչպես իր ընթացիկ, ավանդային, վարկային և այլ հաշիվների, այնպես էլ Բանկում կատարված սակագնային և այլ պայմանների փոփոխությունների մասին, ստանալ տեղեկություններ ընթացիկ հաշիվների մուտքերի, ելքերի և մնացորդների վերաբերյալ:

6.2. SMS-ինֆո ծառայության միջոցով ուղարկված հաղորդագրությունները կրում են տեղեկատվական բնույթ և չեն կարող համարվել քաղվածք (բացառությամբ ընթացիկ հաշիվների մուտքերի, ելքերի և մնացորդների վերաբերյալ) կամ որևէ այլ պաշտոնական փաստաթուղթ:

6.3. Ստորագրելով Բանկի կողմից հաստատված SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը՝ Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է սույն պայմաններին, գիտակցում և ընդունում է SMS հաղորդագրությունների պաշտպանվածության համեմատաբար ցածր մակարդակը և պատասխանատվություն է կրում այլ անձանց համար իր հեռախոսի անհասանելիության ապահովման, իր կողմից որևէ կասկածի դեպքում Բանկին տեղեկացման, ինչպես նաև կարդալուց անմիջապես հետո Բանկի կողմից ուղարկված հաղորդագրությունների հեռացման համար:

6.4. Բանկի կողմից մատուցվում է SMS-ինֆո ծառայության երկու տարատեսակ.

ա) <u>**Նախազգուշացնող հաղորդագրություններ (Alert service):**</u> Հաճախորդի ընտրությամբ պարբերականության սկզբունքով հաճախորդին են ուղարկվում այնպիսի տեղեկություններ ինչպիսիք են վարկ(եր)ի, ավանդ(ներ)ի մարումների կամ Բանկի սակագնային փոփոխությունների, հաշիվներին մուտքերի և ելքերի մասին:

բ) <u>**Հաճախորդի նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրություններ (Pull service):**</u> Հաճախորդի նախաձեռնությամբ Բանկի կողմից տրամադրված կարճ համարին ուղարկվում է նախօրոք սահմանված և Հաճախորդին տրամադրված լատինատառ բառ (տառակապակցություն), ինչի հիման վրա Բանկն ուղարկում է տվյալ բառին համապատասխանող տեղեկատվությունը:

Վերոնշյալ լատինատառ բառերի (տառակապակցությունների) ցանկը սահմանվում է Բանկի կողմից նախօրոք և տրամադրվում Հաճախորդին ըստ պահանջի:

Ստորագրելով «SMS-ինֆո» ծառայության մատուցման դիմումը՝ Հաճախորդները հաստատում են, որ ծանոթացել են Հաճախորդների նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրությունների համար կարճ հեռախոսահամար տրամադրող ընկերության (օպերատորի) կողմից սահմանված սակագնին:

6.5. Բանկը պարտավոր է՝

ա) SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը ընդունելու պահից 2 բանկային օրվա ընթացքում ակտիվացնել վերոնշյալ ծառայությունը Հաճախորդի համար:

բ) Հաճախորդի գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմումի հիման վրա դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը:

գ) SMS-ինֆո ծառայության տրամադրման պայմաններում որևէ պայման վատթարացնող փոփոխության դեպքում այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ պատշաճ կերպով տեղյակ պահել Հաճախորդին:

6.6. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայության մատուցումը Հաճախորդին, եթե Հաճախորդն ունի բանկային հաշիվների վարման և սպասարկման սակագներով նախատեսված չվճարված գումար:

6.7. Հաճախորդը պարտավոր է՝

ա) անհապաղ տեղյակ պահել Բանկին հեռախոսահամարի կորստի կամ փոփոխության մասին, ինչպես նաև հավաստիանալ, որ Բանկում գործում է իր կողմից տրամադրված ճիշտ հեռախոսահամարը, քանի որ սխալ հեռախոսահամարի տրամադրման դեպքում կարող է հրապարակվել բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ինչի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

բ) վճարել Բանկին՝ համաձայն Բանկային հաշվի բացման և վարման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Սակագների և Պայմանների,

6.8. Հաճախորդն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը կամ հրաժարվել դրանից՝ ներկայացնելով գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմում:

6.9. SMS-ինֆո ծառայությունը հանդիսանում է բանկային հաշիվների սպասարկման տարր և դադարեցվում է հաշվի (հաշիվների) սպասարկումը դադարեցնելուն (հաշիվը (հաշիվները) փակվելուն) պես:

6.10. Բանկն իրավունք ունի դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով Հաճախորդին:

7. ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

7.1. Բանկը կարող է Հաճախորդի հետ հաղորդակցումն իրականացնել նաև կապի այլ միջոցներ օգտագործելով (օրինակ՝ Viber, WhatsApp, Telegram և այլ), որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում կարճ տեքստային հաղորդագրությունների, հոլովակների և այլ ուղարկվող նյութերի միջոցով ստանալ տեղեկատվություն Բանկում նոր ծառայությունների, սակագների փոփոխման, իրականացվող ակցիների և այլ տեղեկատվության վերաբերյալ:

7.2. Սույն պայմաններին համաձայնություն տալով համարվում է, որ Հաճախորդը տվել է իր համաձայնությունը՝ Բանկին ներկայացված իր հեռախոսահամարով կապի այլ միջոցներով ուղարկված հաղորդագրություններ ստանալու համար և հավաստում է, որ գիտակցում է, որ դրանք կրում են տեղեկատվական բնույթ:

7.3. Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Բանկին հեռախոսահամարի կորստի կամ փոփոխության մասին, ինչպես նաև հավաստիանալ, որ Բանկում գործում է իր կողմից տրամադրված ճիշտ հեռախոսահամարը: Սխալ հեռախոսահամարի տրամադրման դեպքում առաջացած հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

7.4. Հաճախորդն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել կապի այլ միջոցներով հաղորդագրություններ ստանալը կամ հրաժարվել դրանից՝ ներկայացնելով գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմում:

7.5. Կապի այլ միջոցներով հաղորդակցումը հանդիսանում է Հաճախորդի սպասարկման տարր և դադարեցվում է հաշվի (հաշիվների) սպասարկումը դադարեցնելուն (հաշիվը (հաշիվները) փակվելուն) պես:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմաններով սահմանված դրույթների կատարման, խախտումների բացահայտման և առաջացած խնդիրների մասին զեկուցման, ինչպես նաև պայմանների վերանայման հա-

մար պատասխանատու է Բանկի հաճախորդների սպասարկման համար պատասխանա-
տու ստորաբաժանման ղեկավարը: